ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՑԵԼԵԼ Է ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

06.07.2022 17:14

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի պատվիրակությունը՝ Սիմոն Բաբայանի, Արա Ջոհրաբյանի, Գևորգ Մկրտչյանի և Փաստաբանների պալատի, Փաստաբանական դպրոցի այլ ներկայացուցիչների կազմով այցելել է Արցախի Հանրապետություն և հանդիպումներ ունեցել Արցախի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Օլյա Ալթունյանի, Արցախի Փաստաբանական դպրոցի տնօրեն Էրիկ Բեգլարյանի և այլ ներկայացուցիչների հետ:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են երկու Պալատների միջև համագործակցության արդյունքներն ու հետագա գործունեության ընթացքը՝ ի նպաստ Հայաստանի և Արցախի Հանրապետությունների փաստաբանության զարգացման և ամրապնդման:

BACK $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })